

և շատ անգամ երկաթուղեաց գը-
րամ հասցնել իսկ դժուար կըլլայ: Գործ գտնելը մահուան դիմելէ ա-
ւելի դժուար է հոս: Կը ճանչը-
նամ շատեր որ քանի մը տարիներ
էէ հետէ հոս են, և պարտքէ զատ
ոչինչ ունին, շահ գրեթէ չկայ և
ծախքերն կը շատնան միշտ: Փոքր
ի շատէ ապրելու համար շաբաթը
մէկ անգլիական ոսկիի կը կարօ-
տի մարդ, անկէ վար ապրողներն
գերեզմանին ճամբան կը կարճեց-
նեն: Ամեն գործ ելեքտրականու-
թիւնն ու մեքենաներն կը տեսնեն
և կարծես այդ երկու պատուհաս-
ներն դաշնակցած են իրարու հետ
շնչաւորաց հացը կորզելու, բախ-
տաւոր է այն մարդը որ հացի կը-
տոր մը գտնելու ճամբան ապա-
հոված է: Անգլիերէն չգիտնալն
ալ մարդուն կացութիւնը աւելի կը
դժուարացնէ, Հայոց վիճակի վը-
րայ չպիտի ծանրանամ, անոնք
մեծաւ մասամբ (բացառութիւնք
անշուշտ կը գտնուին) բարոյապէս
ու նիւթապէս սոսկալի դրութեան
մը մէջ են, շատերը ախտաւարակ
և ի՞նչ ախտ, թոքախտաւորներ,
որոնք մի առ մի կերթան գերեզ-
ման: Մեքենաներն մեծ կոտո-
րուծներ գործած են հայոց մարմ-
նայն վրայ. շատերուն ձեռքերը,
ոտքերը, բազուկները, թեւերը
ու մեծ մասին մատները կտոր կը-
տոր ըրած են: Շատերը գոյն չու-
նին, կեանք չունին, կը թուի-
քից թէ գերեզմանէն կուգան ու-
հոն պիտի վերադառնան անյա-
պաղ, թէ որո՞նք կը յաջողին ա-
րեւելցիներէն գրեթէ ոչ ոք, կամ
բնաւ: Պէտք է լաւ լեզու գիտ-
նալ, անգլիի ծայր ճարպիկ ու
ճարտար ըլլալ, նաեւ բաւական
դրամագլուխ ունենալ, ահա այն
ատեն թերեւս յաջողի մարդ. այս
առաւելութիւնները չունեցողները
ընդհանուր հոսանքին կենթար-
կուին: Առ հասարակ արեւելցին
ճարտար ու ճարպիկ չէ, այս երկ-
րին փողոցներուն մէջ անոնք թափ-
թփուքներ անգամ չեն, որմէ կը-
նաք հետեւցնել թէ որքան դժ-
ուար են յաջողութեան պայման-
ները: Արեւելցին՝ վերջապէս բան
մըն է իր երկրին մէջ, իսկ այս
տեղ հիւլէ: Ով որ 15 տարին չը

լորած է թող Ամերիկան իր երեւակայութենէն վանէ, կամ ով որ գեղնորակ հնչիւնի (ոսկի) ընկերակցութիւնը չը վայելեր, թող Ատլանտիկան արեւմտեան ափունքը չերազէ: Ամերիկան վիճ մըն է, ուր գահաւիժողը այլեւս չեկեր: Հսկայ, հարուստ, պաշտելի, զաւրելի, զգուելի և երկրպագելի է Եանքիններու այս երկնային դժոխքը: Ազգերու Բենեամինն է բայց ամենէն բոցեռանգն ու բանիմացն, միեւնոնելու առընթեր անթուրթեան սոսկալի ուրուականը, նուրբ քաղաքակրթութիւնը ու գարավերջիկ լուսաւորութիւնը համընթաց կը բալեն. չմոռնա՞մք նաեւ արտասուքն ու տառապանքը, ահա Ամերիկան: Ինչ որ լէք այս երկրի մասին ոչ միայն կարեւորութիւն տուէք, մի մոռնա՞ք կրկնե՞րեւոյթը՝ հակասութեանց երկիրն է այս, ամեն ինչ իրար կը հակասեն, ու եթէ արտասուքն ու վայելքը բաղդատութեան նըժարին մէջ գնենք այս երկրին մէջ, արտասուքին կողմը հակած պիտի գտնենք յաւէտ:

Բիւզանդ
Հէվրհիլ, 15 մայիս

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Աղէքսանդրիա 21 մայիս 99
Վերջապէս տեղւոյս Թաղ. Խորհուրդը ընտրուեցաւ 160 քուէար կողի մասնակցութեամբ: Ընտրուողներն են Տ. Տ. Պօլոս բաշա, Ա. Կամարական, Միքայէլ պէշրէիզեան, Միլքոնեան, Իբէկեան Ճէվհանճեան և Պիրճ Գովհանեան: Անշուշտ նորակազմ Խորհրդին առաջին գործը պիտի ըլլայ իր նախորդին հաշիւները առնել: Աւելորդ չէ հոս յիշել թէ քուէարկութեան մասնակցած են տեղացիներէ զատ ամեն անոնք,

ԲՈՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ (15)

ԺԱՄԱՆԱԿԱԿԵՑ ՅԱՅ ԿԵԱՆՔԷ ՊԱՏԵՐ ՄԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Վահրամ իր կեանքի ընթացքին մէջ այդ աստիճան իրար չէզոքացնող ներքին զգացումներու պայքար մը չէր ունեցած իր մէջ. պահ մը ամբողջ արիւնը ուղեղը խուժեց եւ սիրտը բաբախելէ զաղարեցաւ. կարծես թէ աչքերը կոպիւններէն դուրս պիտի խոյանային. քիչ մը ատեն այդ անսովոր յուզումին ենթարկուելէ ետք՝ իր պաղարեւութիւնը վերստանձնեց եւ՝
«Բայց եթէ չը հեռանամ, ի՞նչ պիտի ըլլայ վախճանս, ալ չիմ գիտեր. ամիսի մը առաջուան ազդարար ձայնն է խօսողը, ձայն մը որու գուշակութիւնը տառապան ճշգրտութեամբ կատարուեցաւ. անձանթ ձկնք մը աղէտք մը թափեց տիրոջ պոկիւնի, գոցէ նոյն այդ անձանթ ձկնք երկրորդ մ'ալ իմ գլխիս պիտի թափէ. ուրեմն հեռանալու է, ձգելու փախչելու է, որովհետեւ

որ 3 տարիէ ի վեր ընտանիքով և 5 տարիէ ի վեր առանց ընտանիքի հոն կը մնան:

Հագիւ Աղէքսանդրիոյ Թաղ. Խորհրդայ ընտրութիւնը կատարուեցաւ, ահա Առաջ. Տեղապահ Սրբազանը հրաւիրուեցաւ Գահիրէ, ուր պիտի նախագահէ առաջնորդական «անյուպաղ» ընտրութեան, որ այս անգամ Օրմանեանի կողմէ արտասովոր կերպով շեշտուած է մասնաւորապէս յանձին Այվապեանի:

Տեղապահ Սրբազանը այս օրէնքի և խղճի գէժ արարքին մէջ մաս մը չունենալու և ապագայի պատասխանատուութիւններէն ալ ազատ մնալու համար պատճառաբանեալ հրաժարական մը տալով գործէն քաշուեցաւ:

Կը գտնուէին այնպիսիներ որ Աշոտ Սրբազանին ընդգրկութիւնը առաջնորդական խնդրոյն առթիւ նկատէին թէ ինք չա՛հ մը ունի և կամ չա՛հ մը կ'սպասէ անոր մէջ:

Իսկ Գահիրէի Գաւառային երեսփոխանական ժողովը առ այժմ և ոչ մէկ խնդիր կուզէ լրջօրէն նկատողութեան առնել. ոչ առաջնորդի ընտրութեամբ կուզէ զբաղիլ և ոչ ալ տեղապահի: Ահա այս կերպով Օրմանեան—Տատեան էնթրիքը, Իզմիրեանի ընտրութիւնը բեկանելու համար, չուրը կ'իյնայ:

Հոս լուր կը շրջի թէ ի մօտոյ Պօլսէն պալատական բարձր պաշտօնեայ մը պիտի գայ, որ պիտի ջանայ հայ յեղափոխականները համոզել:

Լա հէյի դեսպանախորհուրդին առթիւ ինչպէս արտասահմանի ամեն կողմերը նոյնպէս և հոս միթիւն տեղի ունեցաւ:

Քաղաքը հեռզհետէ պարպուե-

տեւ ինչպէս Յովհաննէս ազան քաղաքական ամբաստանութեամբ բանտարկեցին, վաղը անկասկած զիս ալ անոր մեղաւորի պիտի նկատեն: Այս է խոհեմութեան միակ պահանջը, այդ պահանջին համակերպիլը որքան ալ ծանր ըլլայ, սակայն երկու գլխաւոր պարտականութիւններ ունիմ զոր անպատճառ պիտի կատարեմ. ատոնցմէ մէկը, երէկ գիշերին տիկին Վերգինիի տուած խոստումս է, բանս երթալ եւ Յովհաննէս ազալի մասին անգեկութիւն ստանալ, երկրորդ՝ գործասենեակ երթալով ստակներ ու տետրակներ տուն փոխադրել: Յետոյ առանց մէկուն բան մը ըսելու եւ ունեցած երեսուն ոսկիս գրպանս գնելով հրաժեշտ կառնիմ Հրանդէն եւ այս գիշեր իսկ կը մեկնիմ Կիրասոն, անկէ ալ Պոլիս, հօրեղբօրմ Մարտիկ ազալին քով երթալու համար...

Այս մեղախօսութենէն ետք սենեակին մէջ գտնուած գրասեղանի գրորոցը բանալով քաակ մը առաւ զոր զրպանեց: Դուրս ելլելով ուղղակի բանտ գնաց, երբ հոն հասաւ, Յովհաննէս ազան քովսէրին առջեւ ելած եւ զեռնոր կրկին բանտ տարուած էր: Պա-

լու վրայ է. հարուստ դասակարգը կը ձգէ կը մեկնի տիրող ժանտախտին և հնդկախտին պատճառաւ, որ թէեւ անչափ յառաջ գացած վիճակ մը չունի ցարդ, բայց և այնպէս բուժական սարսափի մէջ ձգած է չորս կողմը:

Սաֆֆի

ՆԱՄԱԿ ԽՄԱՐԳՈՒԹԵԱՆ

Շարժումի 133 թիւ չորեքշաբթի օրուան թերթին մէջ կարդացի Ա. ստորագրութեամբ ստայօգ յօդուած մը, որով Պր. Ա. ճըլմարտութիւնն խնդրութիւնով թափուեալ նպատակով մը կաշխատի տեղացի և գաղթական հայերուս միջեւ գրգռում մը առաջ բերել:

Պատրիարք Օրմանեանի անունն երբ պատարագիչ քահանայ պիտի յիշէր, յիշաւի մի քանի ազգայինք «չպիտի յիշուի» ազգականերով արարողութիւնը խանգարել սպառնացան. այդ ազգայինք եթէ երկրին օրէնքին տեղեակ ըլլային, վ. Մ. ի գրգռիչ յօդուածէն բորբոքելով, եկեղեցւոյ ներգաշնակութիւնը խղով ճամբով չպիտի ընթանային, այլ կանխաւ թող խորհրդոյ գիմիւր գուցէ կարողանային Օրմանեանի անունին յիշատակութիւնը կրկին դադրեցնել տալ, ինչպէս որ ժամանակ մը դադրած էր ու յետոյ Արսէն վարդապետի առաջարկութեամբ յիշուի սկսած:

Տեղացի ազգային մը, որուն «հաճի աղա» օժականը տրուած է, երբ տեսաւ որ իր համոզիչ խրատները ազգեցութիւն չեն ըներ, յուզուած մէկ քանի գաղթական եղբարց անհասկացողութենէն ու աղմուկէն, զանոնք հանդարտեցնելու համար ստիպուեցաւ ոստիկան կանչել տալ բայց միեւ-

հապան ոստիկանին միջոցաւ ներկայացաւ Այի Էֆէնտիին որ շատ անբնական գտաւ Վահրամի պէս երիտասարդի մը ամբաստանեալի մասին գալ տեղեկութիւն առնելը. ան Վահրամը չէր ճանչար. բայց անկէ խանայով որ բանտարկեալին գործակատարն էր «բան մը չեմ կրնար» ըսելով ճանրեց զայն: Պէտք է ըսել որ հայ երիտասարդը քովսէրին քովէն բաժնուելէն ետք՝ աղէտքի մը հանդիպելու բնազդէն ըսկաւ անհաշիւ. կարծես թէ զինքը չըմպատող միջավայրը զայն կրակի պիտի բռնէր. կարծես քիչ մը առաջ իր ծննդավայրէն հեռանալու ցաւով տանջուող, արտասուող երիտասարդ չէր: Աւելորդ է ըսել որ կեանքի նոյնօրինակ պարագաներու մէջ հոգեկան այս փոփոխութիւնը շատ բնական եւ շատերու գլխէն անցած է. մտքով կը քալէր փողոցներուն մէջ. հասաւ գրասենեակ. հոն տետրակներով զբաղեցաւ մօտաւորապէս երեք ժամ. ետքը ծառային հետ ստակները եւ տետրակները տուն տարաւ: Երբ տիկին Վերգինէն զինքը տեսաւ, «Վահրամ ինչ լուր բերիր» հարցուց:

—Տիկին, բանտ երթալով քովսէ-

նոյն ատեն կրկին ինքը ոստիկանին պահանջին ընդգրկմանով, աղմուկ հանողներէն և ոչ մին չի յանձնեց անոր: Սա ապացոյց է թէ ոստիկանը կանչուած էր միմիայն խաղաղութիւնը վերահաստատելու և ահ ու սարսափով մարդ ու դուրս խուժող կիները հանդուրտեցնելու և ապահովելու նպատակով:

Արդ, յանուն ճշմարտութեան կուգամ յայտարարել թէ Պր. Ա. իր գնչու կոչածներուն շնորհապարտ է, վստեղի անոնց թեւերու վրայ բարձրացած եկեղեցիէն հեռացուեցաւ, որով մեծ փորձանք մը ազատեցաւ թէ ինք և թէ անոնք որք յանդգնած էին եկեղեցիին մէջ կռիւ հանել, որուն հետեւանքն է մինչեւ այսօր մէկ քանին: Բու հիւանդ անկողնի ծառայիլը չի զիտցուիր թէ անոնց վիճակը ինչ ելք պիտի ունենայ. եթէ մահ պատահի «բրօգուրօր» կը յանգի գործը:

Այլին բարի և հեռատեսները, «Շարժում» թերթին ալ յարգանք պիտի ընէինք այն ատեն, երբ իր սենակաները գոց պահէր այնպիսի սուտ ու փուտ յօդուածներու առջեւ. մինչդեռ այս կեպով պարապ տեղ կ'աշխատի, անօրուտ պիտի ըլլան իր ջանքերը: Վառնան վառնա է, երկրորդ Ֆիլիպէ մը չի կրնար ըլլալ:

Ս. Ա.

ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԸ

ՎՍԻՊԱՆԱՅ ՊԱՏԵՐԱՋՄԻՆ ՎԵԱՅ

(Շար. Ասխորդ քիւնէ)

Վասակ իր բազմամիայ վարչական փորձառութեամբը խորապէս համոզուած էր թէ՛ հայկական անկազմակերպեալ շարժում մը ա-

րին ներկայացայ, պատասխանեց Վահրամ, սակայն բան մը չկրցայ հասկնալ վայրենի պաշտօնեան ըրած հարցումիս գրեթէ լուրջեամբ պատասխանեց. ըստ երեւոյթին վախճալու բան մը չկայ, հանգիստ եղէք:

Ասոր վրայ Վահրամ իր մօտը կանչեց Հրանդէն. անոր յանձնեց տետրակները եւ ստակը գաղտուկ որպէսզի Յովհաննէս ազալի սենեակը տանի եւ պահէ: Հրանդէն այս տարօրինակ փոխադրութեան բացատրութիւնը պահանջելու վրայ էր երբ իր դատաւորին մէկ նշանացի շարժումին վրայ զգուշացաւ եւ անոր ըսածը կատարեց: Երբ Հրանդէն Վահրամէն առանձնելը վեր կը տանէր, զգաց որ այս վերջինը երկջոտ քայլերով իրեն կը հետեւէր: Վահրամ սենեակի դռնէն ներս մտնելուն պէս իր շրթերէն «Հրանդէն» բառը թռաւ: Հրանդէն հագիւ թէ իր ձեռքը ունեցածները սեղանին վրայ դրած էր, յանկարծ ետին դարձաւ եւ «Վահրամ» մրմնեց: Երկու գորազնիւրը առաջին անգամ ըլլալով զիրկնդխառնեցան, ինքնաբերաբար, զմարդութեան հանդիմանաբար զիմողաւելու փոխադարձ խոստումները ընող զոյլի մը

պարզէին ըլլալէ աւելի աղետալի պիտի ըլլար մեզ, երբ մանաւանդ Յունական ուժը պարտուած կը տեսնէր կատաղի և հուժկու Պարս, կին դէմ: Այսու կողմէր ազգային ներքին բարոյական ուժն ամրապնդել և յեղափոխութեան յաջողութեան կռուաններ պատրաստել, և մինչեւ իր ծրագրոյն գործադրութիւնը քնացնել ու օրօրել Պարսիկ արքունիքը հայկական խորամանկութեամբ, և այս նպատակաւ է որ կը ջանար համոզել հայերը, որպէսզի բռնութեամբ չդէմադրին, այլ բարոյական ուժերով յաղթահարեն հակաքրիստոնէական առաքելութիւնը: Վասկայ այս քաղաքական ուղղութեան համամիտ ու աջակից էին նախարարաց ամենամեծ մասը ու աւագանին, ինչպէս, Բագրատունեաց իշխանը՝ Տիրոց, խորխորունեաց իշխանը՝ Գաղեղոյ, Ապահանեաց իշխանը՝ Մանէճ, Վահանեաց իշխանը՝ Բիւտ, Պալունեաց իշխանը՝ Վարադապուհ, Աբգիւնից իշխանը՝ Արտէն, Ուրծայ իշխանը՝ Ներսէս (տե՛ս փարպեցի էջ 247-248) Ռշտունեաց իշխանը՝ Արտակ, Ակէոյ իշխանը՝ Ընչուդ, Ամատունիներէն՝ Մանէն, և ուրիշ շատ մը սեպուհներ (տե՛ս Եղիշէ էջ 460) և ժողովրդեան ըստ ուր մասը:

Գրեթէ հոգեւորականութիւնն էր որ նախարարաց ու աւագանւոյն քաղաքական հեռատեսութեան հակառակ, քանի մը կողմնակիցներով ժողովուրդին կրօնական զգացումները լարելով, ժողովուրդը զինեց Պարսից դէմ, զի այլապէս կտրելի չէր յաջողի, երբ նախարարաց մեծամասնութիւնն ու ժողովրդեան լրջամիտ դասակարգը և մեծամասնութիւնը յարած էր վասակեան լուրջ և ընտրելի քաղաքականութեան:

պէս: Վահրամ կը զոգար, իսկ Հրանդ անոր իր ճակատէն քաղած համբոյրին սպառնութեան տակ իր նուաղիւր զգաց:

Այս լուռ տեսարանը երկարատեւ չեղաւ:

«Հայրդ բանտարկուեցաւ Հրանդոյ, բաւա, ստոյգ տեղէ իմացայ որ զիս ալ պիտի բանտարկեն, եթէ քաղաքէս չը հեռանամ:»

—Աստուած իմ, միմեջեց Հրանդոյ:

—Այո՛, անմահ հրեշտակս, առանց երկարելու պիտի ըսեմ, այս բաժանումը անքուժելի վէրք մը պիտի բանայ սրտիս մէջ և սակայն ժամանակ մալ հոս կհնալով՝ բանտուիլ, արքայութիւն և զքեզ իսպառ կորսնցնելով՝ ամբողջ էութիւնս պիտի ջախջախէ: Չարիքին փոքրագոյնը ժամանակ մը քաղաքս թողունք է և ահա ասոր համար է այս գիշեր պիտի մեկնիմ կիրասուն, անկե ալ Պոլիս, առան մը հոն պիտի կենամ, մինչեւ որ փոթորիկը հանդարտի...:

—Դո՛ւն, Պոլիս...:

—Այո՛, հոն, բաղդի անողոք դատաւիտին համակերպելով, այլ աշխարհի որ անկեան ալ ըլլամ, Հրա-

Պատճառներ ունինք կարծելու թէ՛ նոյն իսկ վարդան Մամիկոնեան ի սկզբան համամիտ չէր այդպիսի շարժման մը, որովհետեւ վարդան առ երեսու բարացեալներու հետ Հայաստան վերադառնալով, իր կեղծ ուրացութիւնն իր ընտանեաց և պարագայից յայտնելով, փոխանակ ազգին դժոխքով բեր կացութեան ելք մը խորհելու և հայրենեաց բարօրութեան նըւերուն հետ պանդխտութիւնը նախընտրեց և որոշեց իր ընտանեօք Յունաց բաժինը երթալ: Իր Հրամայակ եղբայրը այս կարծեաց ուժ տուաւ և վարդանայ ընկերանալով ճանրայ ելաւ Յունաց բաժինը երթալու: Գրեթէ սահմանագլխի մօտեցած և Հրամանայ գիւղն հասած էին երբ վասակ իմացաւ նոցա մեկնումը: Վասակ Սիւնի հայրենեաց այս արթնուն և անձնուէր պաշտպանը, Մամիկոնեան տան՝ հայրենեաց և թագաւորական գահի մատուցած մեծամեծ ծառայութիւններն ինկատի առնելով, վարդանայ եւ իր եղբոր այս ընթացքին հայրենեաց համար աղիտաբեր ըլլալը կշռելով և իր ծրագրին ապագայ իրագործման համար վարդանի պէս անձնուէր, ներու անհրաժեշտութիւնն զգալով աճապարեց նախարարական ժողով դուռարել և Մամիկոնեան եղբարց վերադարձը փութացնել: Գի ինք վասակ համոզուած էր և կըսէր. «զի առանց նորա մեր այս ամենայն կամք և խորհուրդը՝ և ո՛չ մի ինչ վճարեն» (տե՛ս փարպեցի էջ 486):

Ահա՛ այսպէս կը խորհէր ու կը խօսէր հայրենեաց այն հարազատ ու պատուաբեր զաւակն՝ վասակ, ա՛յն պահուն երբ ամեն ոք իր պահովութեան միայն ջանադիր էր և վարդան թողլով աւ լքանելով հայրենիքը իր հանգիստը կորուսէր Յունաց բաժնին մէջ:

Արտաշէս կարապետեան (Շարունակելի)

նոյն, գիտցի՛ր որ սիրտս միշտ քեզի կապուած պիտի մնայ, զու պիտի ըլլաս լուսավառ աշակերտայն որ կեանքի ապագամբերուն դէմ մերկայող փոթորիկներուն մէջ պիտի առաջնորդէ ինձ: Ըսէ ինձ որ չպիտի ակարանաս և և հակառակ ամբիքիդ մատաղութեան կեանքի դժնդակ անակեղաններուն դէմ մինչեւ որ բաղդը իր սեւ երեսը փոխէ և երկուքնիս գանք իրարու միանալը:»

Հրանդը երազել կը կարծէր, ցնորածի պէս մտիկ ընելով անոր, նախապէս առանց բան մը հասկնալու: Յանկարծ ցանցաւ արցունքի կաթիլներով թրչուեցան իր թաւ թարթիչները:

«Քեզի ալ ծուղակ լարեր են, քեզի ալ հօրս վիճակակից ընել կուզեն: Եւ ինչեւ եւ քիչ մը ետքը իր յուսահատական չեղար փոխելով, կենդանի թափով մը շարունակեց, չէ զուս պէտք ես և պիտի ազատիս, քանի որ դեռ առիթ կայ: Գնա՛ Վահրամս, դնա՛, ես այդ բանին կը փափաղիմ: Խօսք կուտամ որ ես պիտի հանդուրժեմ այս բաժանումը՛նք և սրտիս ամենէն աւելի ազդող ցաւերուն: Հրանդը մինչեւ իր մահի ետքի վայրկեանը հաւատարիմ

ԼՐԱՔԱՂ

Մեզ հասած տեղեկութեանց համեմատ Ռուսոնոգի ազգայինք վաղը պիտի ընտրեն իրենց թագաւորհրդոյ անդամները. բայց կըսուի թէ այդ ընտրութեան համար հարկ եղած օրինական նախապատրաստութիւնները չեն եղած. այսինքն ոչ ընտրողական ժողով կազմուած է և ոչ ընտրելեաց ու ընտրողաց ցանկ պատրաստուած. այլ միայն մի քանի անձերու միջեւ տեղի ունեցած խորհրդակցութեան մը հետեւանօք 5-6 ընտրելիներու դիմումով ու անոնց հաճութիւնը առնուած է. ուստի վաղը կատարուելիքը ոչ թէ քուէարկութիւն այլ պարզ ձեւակերպութիւն մ'է: Եւ միեւնոյն ատեն տարաձայնութիւն կը շրջի թէ ընդ Ռուսոնոգի չեղողները քուէարկութեան իրաւունք չպիտի ունենան:

Եթէ այս լուրերու ստուգութիւնը հաստատուի, մենք պիտի ըսենք թէ Ռուսոնոգիք համարալսութիւնը վերահաստատել բընաւ չեն փափաղիր:

—Բարիքի հայ գաղթականութիւնը 3400 Փրագ զրկուած էր Պատրիարքարան ինպատ վանայ սովելոց, նոյնպէս Մանչիսթրի ազգայինք 7000 Փրանգ զրկան են:

—Տեղւոյս երիտասարդաց կողմէ ինպատ Տիար Յ. Չաքրեանի ծանուցեալ ներկայացումը չորեքշաբթի իրիկուն տեղի ունեցաւ: Թատերասէր երիտասարդներու այդ խմբակը յաջողեցաւ հանգիստեանները գոհ թողալ. ներկայից թիւը բաւական ստուար էր, բայց հասոյթը անոր չէ համապատասխանած կըսուի:

—Ամերիկայի Առաջնորդ Գեր. Սարաճեան շրջաբերական մը հա-

պիտի մնայ քեզ:»

—Ո՛հ, շնորհակալ եմ, աստղս, պատասխանեց Վահրամ, ասք համբոյր մը զրօշմելով անոր ճակատին վրայ. սակայն երկրորդ պայման կայ զոր պէտք է յարգես. մօրդ կամ ուրիշին իմ մեկնումիս մասին բան չխօսիս:

—Անհոգ եղի՛ր, յարեց Հրանդը, քաջութեամբ ջանալով ծածկել մորթիլը որ իր սրտին մէջ կուռնար և կարծես զայն պիտի ջախջախէր:

Երկու սրտահատորներ վերջին համբոյրին փոխանակեցին իրարու հետ. Վահրամ առանց արկին վերգինէին երեւնալու, որ միշտ նախասնկեակը կը տանջուէր առանձին, առանէն զուրս ելաւ. իսկ Հրանդը խեղաբարի մը պէս իր առանձնասնկեակը քաշուեցաւ: Արցունքը հեղեղի պէս կը թափէր աչքերէն որոնց կը խտնուէին երբեմն երբեմն խեղճուկ հառաչանքներ ասանկ սարկիքի մը մէջ, այս տեսակ զրկանքի մատնուած մատաղաշ հոգիի մը...:

Կէս ժամ ետքը Յովհաննէս աղան կրկին Ալի էֆէնտիի ներկայութեանը հանուեցաւ: Միեւնոյն անարգական եղանակով, միեւնոյն հարցումները եղան իրեն, միեւնոյն պատասխանները տը-

նելով ամերիկաբնակ բոլոր ազգայիններուն կողմէ ըրած է Հայաստանի սովելոց ինպատ հանգանակութիւններ ընելու: Ուրախալի է տեսնել թէ նոր աշխարհի շատ մը քաղաքներէն ամեն դասակարգի ազգայինք փութացած են իրենց նպատակները յանձնել կազմուած յանձնախումբերու: Այս նպատակաւ նիւ Եօրքի մէջ ալ թատերական ներկայացում մը տըրուած է, բայց հասոյթը դեռ ուրիշ չենք իմացած:

—Երեկ ստացանք Տ. Մինաս Չեւրաղի ՂԱՄԷՆԻ թերթը, որուն մեծագոյն մասը կը պարունակէ իր ՂԱ Հէյի մէջ ըրած դիմումները ու ստացած պատասխանները: Տ. Չեւրաղ ո՛ր եւ է ակնարկութիւն չէ ըրած Օրմանեանի հեռագրի մասին, ինչ որ նամակագիր մը Պոլսէն վերապահութեամբ իմացուցած էր. եւրոպական թերթերու մէջ ալ մինչեւ ցարգ Օրմանեանի հեռագիրը հաստատող լուր մը չէ տեսնուած:

—Կ'իմանա՞ք թէ կարգ մը եւրիտասարդներ երկրորդ ներկայացում մը պիտի տան ինպատ Հայաստանի սովելոց:

Ե Է Ն Ի Թ Օ Բ Լ Ա Ր

ՍԵՍՍԻՁ ՎԷ ԹԻԻԹԻՆՍԻԻՁ ԷԼԷԻԹԻԹԻԹԻՆՍԻԻՁ

Ինկիլթէրատա թօրիլ ֆապրի. դասընտա 5 սէնէտէն պէրու շա. կիրտ պուլունան 19 եաշընտա պիր կէնճ եէնի էլէէթթիթ թօրու իհ. տաս իթմիշ տիր:

Նումանէ օլարագ եարըմըլ օ. լան թօր 32 քիլօ 200 կրամ ա. զըրըզընտա օլտըղը հալտէ ալէ. նէն բրօլա իտիլմիշ վէ 1 միլ

աւ. Ալի էֆէնտին, թրքական կատակերգութիւնը խաղաշարունակելով հրամայեց որ Յովհաննէս աղան վերստին բանտ տանին: Հինգ ժամ ետքը վերի թաղի թաղապետ Գրիգոր կանչուեցաւ: Փօմիսէր Ալի էֆէնտի, ամբաստանալը եւ Գրիգոր Մարգարեցի թաղը ձերբակալելուն տունը գացին գոյքերը խոզարկելու համար: Յովհաննէս աղայի սենեակը մանելով հոն գտան տետրակներ ու նամակներ, Ալի էֆէնտի պահ մը ծռելով տետրակները նայիլ փորձած պահուն, առանց ուրիշէ մը նկատուելու, քայմաքամի առաջարկով Պոտաքեանի պատրաստած չինձու նամակը տետրակներէ մէկուն մէջ գետեղեց: Անկից ետքը տետրակներ եւ նամակներ պարկի մը մէջ լեցնելով երեքը մէկանց վերադարձան պաշտօնատուն:

Զ. Կարաւարական Շարունակելի

